ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

02.04.2013թ.
197-ի 2

Հայաստանի Ազգային արխիվի տնօրեն
պարոն Ամատունի Վիրաբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Վիրաբյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Զարուհի Եղիազարյանը եւ խնդրել է օգնել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: Նա բնակվում է ք. Երեւան, Նոր Արեշ 15փ, 56 տանը, որը Էրեբունու շրջգործկոմի՝ 31.08.1995թ.-ի թիվ 33/150 որոշմամբ որպես սեփականություն հանձնվել է նրան եւ նրա ընտանիքին: Այժմ իրեն հատկացված տունը որպես սեփականություն գրանցելու համար Երեւանի քաղաքապետարան եւ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ ներկայացնելու համար նրան անհրաժեշտ են որոշ փաստաթղթեր:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել արխիվային տեղեկանք ք. Երեւան, Նոր Արեշ 15փ, 56 տունը, ինչպես նաեւ ք. Երեւան, Նոր Արեշ 15փ, 56 տան տնամերձ հողամասը ՀՀ քաղաքացի Զարուհի Եղիազարյանին որպես սեփականություն տրամադրելու վերաբերյալ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան